ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2022 թվականի N 23

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, «ՄԵՏՐՈՊՈԼԻՆԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՅՈՒՐԱՆՈՑԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մետրոպոլինա» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Եղիշի Հովսեփյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15062021-06-0059 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագրերը, եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 20 հասցեում գտնվող «Մետրոպոլինա» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հյուրանոցը և դրանով զբաղեցված հողամասը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 20 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 3.48քմ և 3.61քմ մակերեսներով ինքնակամ կառուցված պարիսպների, 4804.05քմ մակերեսով հյուրանոցի, 8.76քմ մակերեսով անցակետի, 76.9քմ մակերեսով ավտոտնակների, 158.05քմ գլխավոր մուտքի և դրանցով զբաղեցված 5372.8քմ մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 20 հյուրանոց (հատակագիծ թիվ 1).

բ) 11.15քմ և 12.72քմ մակերեսներով ինքնակամ կառուցված պարիսպների և դրանցով զբաղեցրած 3298.2քմ մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 20/2 պարիսպ (հատակագիծ թիվ 2).

գ) 13.8քմ մակերեսով ինքնակամ պարիսպի և դրա զբաղեցրած 1000.0քմ մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 20/3 պարիսպ (հատակագիծ թիվ 3):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2022 թվականի N 24

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԲԵՂՅԱՆ ՓՈՂ ԹԻՎ 2Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՉԱԳԱՆ ՍԵՐԳՈՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաչագան Սերգոյի Հարությունյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1906535 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Աբեղյան փող, թիվ 2ա հասցեում գտնվող Վաչագան Սերգոյի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր ք., Մ. Աբեղյան փողոց, 2/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2022 թվականի N 25

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 43 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Վարշամի Մկրտչյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1740348 վկայականը, 16 մարտի 2020 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 683 (նոտարական ակտի կոդ: 843-20200316-84-4519802) և թիվ 684 (նոտարական ակտի կոդ: 843-20200316-84-4519582) վկայագրերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Նարեկացի փողոց թիվ 43 հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 43/50 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2022 թվականի N 26

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂ ԹԻՎ 58Խ/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտուշ Հրաչիկի Գալստյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1876206 վկայականը, 01 դեկտեմբերի 2021 թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 6643 (նոտարական ակտի կոդ: 763-20211201-2-5557870) պայմանագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Բաղրամյան պող թիվ 58Խ/1 հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր ք., Մարշալ Բաղրամյան պողոտա, 58/24 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2022 թվականի N 27

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 7 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 19-ի «Վանաձոր համայնքի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 7 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2022 թվականի N 28

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Այծեմնիկ Հայկի Օհանյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1738512 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ՀՀ կադաստրի կոմիտեի 27.04.2022 թվականի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-27042022-06-0114 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 23 հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր ք., Ա. Մյասնիկյան փողոց, 23/28 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 30
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2022 թվականի N 29

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 58Խ-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Օֆելյա Կառլենի Թամարյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1871060 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա թիվ 58խ-1 հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր ք., Մարշալ Բաղրամյան պողոտա, 58/25 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 30
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2022 թվականի N 30

ԱՍՏՂԻԿ ՊԱՊԻԿԻ ԱՎԵՏԻՔՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աստղիկ Ավետիքյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 10-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Աստղիկ Պապիկի Ավետիքյանին նշանակել Վանաձոր համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարի պաշտոնում:

2. Աստղիկ Ավետիքյանի լիազորությունների կատարման սկիզբ սահմանել 2022 թվականի հունիսի 01-ը:
3. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքացուցակի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 31
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2022 թվականի N 31

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 534 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 03 մարտի 2020 թվականի «Վանաձոր համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով հանձնաժողով ստեղծելու և Վանաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 1256-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 534 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «Մարինե Ղազախեցյան- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-սոցիալական աշխատող» բառերը փոխարինել «Լիլիթ Խաչատրյան- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի, լրատվության և արարողակարգի բաժնի գլխավոր մասնագետ» բառերով:
2. Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «Լիլիթ Խաչատրյան- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի, լրատվության և արարողակարգի բաժնի առաջատար մասնագետ» բառերը փոխարինել «Մոնիկա Պարանյան- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ- սոցիալական աշխատող» բառերով:
3. Որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետում «Սեյրան Ղամբարյան- Վանաձոր համայնքի ավագանու անդամ» բառերը փոխարինել «Լևոն Ղազախեցյան- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ» բառերով:
4. Որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետում «Արևիկ Լոքյան» բառերը փոխարինել «Կարեն Դավթյան» բառերով:
5. Որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետում «Սոխակ Մելքոնյան» բառերը փոխարինել «Լուսինե Թադևոսյան» բառերով:
6. Որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետում «Ժակլին Հեքիմյան- «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը (համաձայնությամբ) Հայաստանում» ԲՀ նախագահ» բառերը փոխարինել «Սուսաննա Մարտիրոսյան- «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ Վանաձոր համայնքային կենտրոնի տնօրեն» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 31
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2022 թվականի N 32

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԴԱՎԻԹ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Հակոբյանի դիմումը, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով, ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետով, ***որոշում եմ.***

1. **2022 թվականի հունիսի 01-ից** լուծել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանի հետ 15 նոյեմբերի 2021 թվականին կնքված թիվ 2330 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 31
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2022 թվականի N 33

ԴԱՎԻԹ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Վոլոդյայի Հակոբյանի դիմումը և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի գլխավոր քարտուղարի 31.05.2022 թվականի թիվ ԱԵ/15.4/13760-2022 գրությունը,, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 4-րդ ենթակետով և 3-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Դավիթ Վոլոդյայի Հակոբյանին ընդունել աշխատանքի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժնի պետի ժամանակավոր թափուր պաշտոնում /ծածկագիր՝ 2.1-14/, կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի որոշվելը:

2. Աշխատավարձը՝ համաձայն պաշտոնային դրույքաչափի:

3. Ծառայողական պարտականությունների սկիզբ սահմանել 2022թ. հունիսի 01-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 31
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2022 թվականի N 34

ԲԵՆԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բենիկ Նազարյանի դիմումը և ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով, ***որոշում եմ.***

1. Բենիկ Գուրգենի Նազարյանին 2022 թվականի հունիսի 01-ից ազատել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնի պետի պաշտոնից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 31
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2022 թվականի N 35

ԲԵՆԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բենիկ Գուրգենի Նազարյանի դիմումը և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի գլխավոր քարտուղարի 31.05.2022 թվականի թիվ ԱԵ/15.4/13760-2022 գրությունը, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 4-րդ ենթակետով և 3-րդ կետի 3-րդ ենթակետով՝, ***որոշում եմ.***

1. Բենիկ Գուրգենի Նազարյանին ընդունել աշխատանքի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր թափուր պաշտոնում /ծածկագիր՝ 2.1-12/, կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի որոշվելը:

2. Աշխատավարձը՝ համաձայն պաշտոնային դրույքաչափի:

3. Ծառայողական պարտականությունների սկիզբ սահմանել 2022 թվականի հունիսի 1-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. մայիսի 31
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2022 թվականի N 36

ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ստեփանի Այվազյանի դիմումը և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի գլխավոր քարտուղարի 31.05.2022 թվականի թիվ ԱԵ/15.4/13760-2022 գրությունը, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 4-րդ ենթակետով և 3-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Արմեն Ստեփանի Այվազյանին ընդունել աշխատանքի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետի ժամանակավոր թափուր պաշտոնում /ծածկագիր՝ 2.1-9/, կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի որոշվելը:

2. Աշխատավարձը՝ համաձայն պաշտոնային դրույքաչափի:

3. Ծառայողական պարտականությունների սկիզբ սահմանել 2022 թվականի հունիսի 1-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. հունիսի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2022 թվականի N 37

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածին համապատասխան, Վանաձոր համայնքի 2023 թվականի բյուջետային գործընթացը սկսելու և բյուջեի նախագիծը կազմելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. **Համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին՝**
   Մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 10-ը համայնքապետարանի ֆինանսական բաժին ներկայացնել բյուջետային ֆինանսավորման հայտերը և պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:
2. **Աշխատակազմի բաժինների պետերին՝**
   ա)Սույն որոշման 1-ին կետում նշված ժամկետներում ֆինանսական բաժին ներկայացնել համապատասխան ոլորտներում սպասվելիք եկամուտների, ինչպես նաև համայնքի ղեկավարի՝ օրենքով սահմանված լիազորությունների ուղղությամբ իրականացվելիք ծրագրերի և գնման հայտերի նախագծերը, գնվելիք աշխատանքների, ծառայությունների և ապրանքների գծով ծախսերի նախահաշիվները ըստ բյուջետային մուտքերի և ելքերի հաշվարկման համապատասխան ձևերի, ծախսերը հիմնավորող նախագիծ նախահաշիվներով:
   բ)Մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 15-ը համայնքապետարանի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին ներկայացնել ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու համար առաջարկվող ծրագրերը:
   գ)Համապատասխան ոլորտներում ապահովել սույն որոշման առաջին կետի կատարումը:
3. **Աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետին՝**

Մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 22-ը ամփոփել և համայնքի ղեկավարին ներկայացնել ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից նպատակային հատկացումների (սուբվենցիաների) բյուջետային ֆինանսավորման հայտերը հաստատելու մասին Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագիծը:

4. **Աշխատակազմի ֆինանսական, զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինների պետերին՝**

   Մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 20-ը ամփոփել սահմանված ձևերով ներկայացված փաստաթղթերը, կազմել Վանաձոր համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագիծը և ներկայացնել համայնքի ղեկավարին:

5. **Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել համայնքի ղեկավարի օգնական էդիկ Հունանյանին:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. հունիսի 01
ք.Վանաձոր